# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 մարտի 2020 թվականի N 44 - Ա

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՌՈԲԵՐՏ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ԹԵՐԵԶԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-117-002-007-1 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով, 48-րդ կետով և հիմք ընդունելով Ռոբերտ Սարգսյանի 2020 թվականի մարտի 6-ի Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը, **որոշում եմ**.

քաղաքացիներ Ռոբերտ Սարգսյանին, Թերեզա Սարգսյանին, Կարապետ Սարգսյանին և Հարություն Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետութուն, Շիրակի մարզ, գյուղ Փոքր Սեպասար, 2-րդ փողոց, բնակելի տուն 5 հասցեում գտնվող 08-117-002-007-1 կադաստրային ծածկագրով բնակելի տանը /գրանցված՝ 2004 թվականի հոկտեմբերի 29-ին, վկայական N 1134792/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետութուն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Փոքր սեպասար, 2-րդ փողոց, բնակելի տուն 5:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվականի մարտի 6
գյուղ Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 մարտի 2020 թվականի N 45 - Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՂԱԶԱՆՉԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 0.3 ՀԵԿՏԱՐ (3-ՐԴ ԿԱՐԳԻ ԽՈՏՀԱՐՔ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 08-075-102-001-01-ԻՑ) ՂԱԶԱՆՉԻ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՏԻԳՐԱՆ ԱՐԹՈՒՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին, 2-րդ, 6-րդ կետերով և հիմք ընդունելով աճուրդներ և մրցույթներ կազմակերպող ու անցկացնող համայնքային հանձնաժողովի 2019 թվա կանի մայիսի 30-ի N 5 արձանագրությունը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ղազանչի գյուղում գտնվող Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 0.3 հեկտար (3-րդ կարգի խոտհարք, կադաստրային ծածկագիր՝ 08-075-102-001-01-ից) 3 տարի ժամկետով, ամսական 110.8 (հարյուր տաս ամբողջ ութ տասնորդական) Հայաստանի Հանրապետության դրամ վճարով օգտագործման տրամադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ղազանչի գյուղի բնակիչ Տիգրան Արթուրի Պետրոսյանին:
2. Քաղաքացի Տիգրան Արթուրի Պետրոսյանի հետ կնքել խոտհարքից օգտվելու պայմանագիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ　　　　　ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվականի մարտի 9
գյուղ Աշոցք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մարտի 2020 թվականի N 46 - Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԱՄՎԵԼ ՍՈՒՄԲՈՒԼՅԱՆԻՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 64-Ն որոշման հավելված 1-ի 7-րդ կետի 1-ին, 2-րդ ենթակետերի «ա» պարբերության, ***որոշում եմ.***

Անհատ ձեռնարկատեր Սամվել Սումբուլյանին (ՀՎՀՀ՝ 57287123, պետական ռեգիստրի գրանցման համարը՝ 63.100360/2012-05-16, իրավաբանական հասցեն՝ գյուղ Բավրա փողոց 3, 4, ընդհանուր մակերեսը՝ 20 քառակուսի մետր) 2020 թվականի 2-րդ եռամսյակի համար տալ ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2020 թվականի մարտի 10
գյուղ Աշոցք